



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

84

7-89

2369

2011

~~W 1039~~

~~749~~


34-3
7-89

42

ՄԱՅՐԱԽՐԱՏ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

ՊՈՒՅԼԻ ԳԱՂՂԻԱՑԻՈՅ



ԹԱՐԳՄԱՆԵԱՅ

Է. Մ.

ՏԵՏՐԱԿ Ա.

1008
35225

ԱՆԽՈՂԵՄ ՈՐԴԵՍԻՐՈՒԹԻՒՆ

9



ԹԷՈՒՄԻԱ

ԻՏպարանի Խաշիպեան Ուսումնարանի Հայոց.

1862.

2003

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՆԱՆՈՒԹԵԱՆ 646

Ք Ր Վ Պ Ն Ո Ս Տ Մ

ՊՐԻՆՏԻՆԻ ՊՐԻՆՏԻՆԻ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ

Ա. Մ. Ա.

ՊՐԻՆՏԻՆԻ

ՊՐԻՆՏԻՆԻ ՊՐԻՆՏԻՆԻ

ՊՐԻՆՏԻՆԻ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՆԱՆՈՒԹԵԱՆ.

ԹԻՒՆՔԱՆԱԿ, 26 յուլիսի 1862

5005

ԱՆԽՈՂԵՄ ՈՐԴԵՍԻՐՈՒԹԻՒՆ

Մայրական սէրը մարդուս սրտին ամենէն մաքուր, ամենէն վառվրուուն զգացմունքն է: Այս սէրը վայրենի մարդկանց մէջ ալ նոյնպէս կայ՝ ինչպէս որ քաղաքակիրթ ժողովրդոց մէջ. ասով կատաղի գազանները կսանձուին, եւ վախկոտները սիրտ կառնուն. ասոր իշխանութեանը տակն է ինչ բան որ աշխարհիս երեսը կեանք ընդուներ է եւ կեանք տալու իրաւունքն ունի:

Այս խորունկ եւ դերազանց զգացմունքին դուրսանքը եւ նկարագրութիւնը կտեսնեմք ամէն ժամանակի եւ ամէն ազգաց գրուածքներուն ու յիշատակարաններուն մէջ: Թէ

որ Աստուածաշունչ սուրբ գիրքը աչքէ ան-
ցընեմք, կտեսնեմք որ այս անսպառ արեւէն
Սողոմոնի արգարութիւնը լոյս կառնու, եւ
մեր սիրտը անոյշ ցաւակցութեամբ մի կը-
լցուի: Կտեսնեմք որ Մովսէս իւր մօրը հնա-
րագէտ սիրովը մահուընէ կազատի. Ագա-
րին լալու ձայնովը աղբիւր մը կ'իւրնտուեմք
որ մահուան դուռը հասած Իսմայելին աչ-
քը բացուի, եւ Ռաքելին հետ արցունք կը-
թափեմք. եւ մեր եկեղեցիներուն մէջ մեր
յարգութիւն տուած բաներուն ամենէն գե-
ղեցիկը՝ այն գերահրաշ Տիրամայրն է, որ
իւր զաւակին կաթ կուտայ ու վրան մայրա-
կան սիրով կգուրգուրայ:

Թողումք դրսի պատմութեանց մէջ եղած
մայրական սիրոյ անհամար օրինակները.
տեսնեմք թէ ինչեր կ'ապամեն ճանապար-
հորդներն ու բնապատումները: Մարդ կը-
զմայլի երբոր կտեսնէ մայրական սիրոյն ա-
մենայն կենդանեաց վրայ բանեցուցած ոյժը:
Կնայիս՝ ասդին աստիկ ըսուած կենդանին,
որ իւր ձագերէն չբաժնուելու համար, որ-
սորդին նետէն ամենեւին չվախնալով՝ կը-
թողվէ զանոնք ու անտառին խորունկ տեղե-
րը կտանի: Անդին հաւաղուան ըսուած թըռ-
չունը իւր կտուցովը զարնելով՝ կուրծքը
կարիւնտոէ ու արիւնովը ձագերը կկերակրէ:

Հեռուն՝ քանի որ է ի վեր արջը զարմացած
տագնապած, իւր մեռած արջուկին մորթը
կլիզէ եւ կաթ տալու կաշխատի, մինչեւ որ
վերջապէս արջուկին հոտելէն կիմանայ թէ
անզաւակ մնացեր է. ինչպէս որ ինքն եւս
յայտնի կընէ իսկոյն՝ երբ ձայնը ձգած կը-
մռընչէ ու գետնին երեսը կտապլտըկի: Վեր-
ջապէս կաքաւը, որ այնչափ վախկոտ թըռ-
չուն է, որսորդին շանը բերնին առջեւը
կնետուի համարձակ, որպէս զի իւր ձագե-
րուն մահուրնէ ազատելու ժամանակ տայ:
Շատ երկար կլինէր թէ որ ուզէի այս տեղ
մայրական սիրոյ ամէն գեղեցիկ ու սրտա-
շարժ օրինակները մէջ բերել:

Անոր համար ալ ամենայն ազգաց անուա-
նի բանաստեղծները այս նիւթիս վրայ ի-
րենց ճարտարութիւնը ցցուցեր են. նմա-
նապէս երեւելի պատմագիրներ ու վիպա-
սաններ: Եւ յիրաւի, ո՞վ կրնայ Պօղոս ու
Վիրգիլնեայ պատմութիւնը կարդալու աստե՛ն
արցունքը բռնել՝ այն միջոցին որ կաթուռ
տիկինը իւր սիրելի Վիրգիլնէէն կբաժնուի:

Եւ սակայն ո՞վ կրնար հաւատալ թէ այս
մայրական քաղցր ու մաքուր սէրը, այս՝
մարդու կենդանութեան առաջին սնունդը,
որ երկնային մանանային պէս պէտք է հա-
ւասար բաժնուի մարդկանց մէջ, եւ զոր

կենդանիներն անգամ անխափր կբաժնեն իրենց ձագերուն, — շատ մայրերու սրտին մէջ այնպիսի խարու թիւններ եւ անխոհեմ որդեսիրութիւն մը կձրգէ, որ յետոյ պատճառ կլինին անդարմանելի վնասներու :

Երանի թէ առաջիկայ պատմութիւնը, — որ ստոյգ աղբիւրէ առեր եմ, — խրատ լինի որդեսէր ու խոհեմ մայրերուն, եւ զգուշանան այն խարու թիւններէն, այսինքն մէկ տղուն ուրիշներէն աւելի երես տալէն, որ մինչդեռ ծածուկ է՝ իրենց ալ չար շարանք ու անհանգստութիւն կպատճառէ, ու երբ դուրս ելնէ՝ ընտանեաց խաղաղութիւնը տակն ու վրայ կընէ, եւ գրեթէ միշտ երես տրուած տղուն խեղճութեանը պատճառ կլինի :

Մ ՈՆՔԱՌ անունով տիկինը տասնեւութը տարեկան ատենէն մայր եղած էր երկու զաւակաց, որոց անձնական սկարութեանը պատճառաւ ինքը կաթ տալ չէր կրնար : Շատ փափաքեցաւ որ ինքը կատարէ այս անոյշ եւ սրբազան մայրական պարտքը, բայց ճար չեղաւ . հարկ եղաւ որ բժիշկներուն խօսքին եւ իւր ամուսնոյն ազաչանքին մտիկընէ, ու իւր զաւակաց կաթ տալու աշխատանքէն ետ կենայ : Երկու զաւակ ունեցաւ մէկմէկէ տարի մը ետքը . մէկուն անունը

Շատը (Կարողութիւն), միւսինը ժիւղ (Յուշիտ). եւ
ասոնց կաթ առող մեծցընսզը Փարիզու քո-
վերէն գեղացի առողջ կին մըն էր :

Այն երկու եղբայրները միակերպ սնունդ-
ու կրթութիւն առնելով՝ իրարու վրայ ալ
սաստիկ սէր մը ունեցան . Շառլը երկու տա-
րեկան հաղիւ թէ կար՝ երբ ժիւղին ձեռ-
քէն բռնած կքալցընէր, եւ իրեն տրուած
խմորեղէններն ու շաքարները եղբօրը բեր-
նին կտանէր : Միշտ մէկտեղ կխաղային, ամե-
նեւին կռիւ չէր լինէր մէջերնին . թէ որ մէկ
եղբայրը ծիծաղէր, միւսն ալ կուրախանար,
մէկը լար՝ միւսին աչքէն ալ արցունք կու-
գար, տեսնողները կարծէին թէ սոքա մէկ
ատեն աշխարհք եկած երկուորեակ են, ու
աշխարհիս նեղութիւններն ու հանգստու-
թիւնները միշտ մէկտեղ քաշելու կամ վայե-
լելու խօսք գրած են իրենց մէջ :

Մոնքառ տիկինը երրորդ որդի մըն ալ
ունեցաւ, որուն անպատճառ ինքը ուզեց
կաթ տալ. թէպէտ եւ բժիշկները դարձեալ
հրաման չէին տար, բայց նա խօսքը առաջ
տարաւ, եւ այն կաթ տալը մեծ ուրախու-
թիւն էր իրեն :

Մէկ քանի տարիէն, երբոր այս երեք եղ-
բայրները ինը տասը տարեկան եղան, տես-
նուեցաւ որ հասակով, ուժով եւ բնութեամբ

ամենեւին իրարմէ տարբերութիւն չունէին .
ծնողքներէն բան մը որ ընդունէին՝ իսկոյն
իրենց մէջ հաւասար կբաժնէին . սրտերուն
մէջ չկար այն վնասակար նախանձը որ գիւ-
րաւ կմտնէ տղայոց սիրտը , ինչպէս թու-
նաւոր բոյս մը նոր բանուած հողի վրայ :

Պ. Մոնքառը գիտելով իւր ամուսնոյն վար-
մունքը տղոցը հետ , շատ անգամ խրատ կու-
տար անոր որ մայրական սէրը խոհեմու-
թեամբ բանեցընէ , այս կամ այն զաւակին
ուրիշներէն աւելի երես չտայ , եւ մանա-
ւանդ մեծ զգուշութեամբ ծածկէ այն ա-
ւելորդ սէրը որ ունէր երրորդ որդւոյն՝
Եղուարդին վրայ . եւ այնչափ կվախնար անոր
երես տալէն որ շատ անգամ միւս երկուքին
աւելի սէր կցուցընէր , իսկ Եղուարդին հետ
պաղ կվարուէր . խեղճ տղան ալ մօրը քով
մօտենալու կվախնար եղբարցը առջեւ . եւ
հետզհետէ այնպէս սաստիկ տրամուլթիւն
եկաւ տղուն վրայ որ հիւանդացաւ : Մոնքառ
տիկինը՝ աչքը արցունք՝ զաւակին քովէն
չէր բաժնուեր , չէր գիտեր որ ինչպէս շոյէ
ու փայփայէ զինքը . իսկ Եղուարդ մինչեւ
այս խօսքերս ալ հանեց բերնէն հառաչելով՝
թէ «Մայրս զիս չսիրեր , թէպէտ եւ իրեն
կաթովը մեծցուցեր է զիս , եւ ես միւս եղ-
բայրներէս աւելի իրաւունք ունիմ իրեն որ-

դի ըսուելու . . . » Այս խօսքերը կարծես թէ նոր լոյս մը ծագեցին մօրը սիրտը . միտքը դրաւ որ անոյշ վարմունքովը կամաց կամաց իմացընէ այն որդւոյն վրայ ունեցած աւելի սէրը ; միայն տղուն առողջանալուն կսպասէր :

Օր մը եղուարդ աչքերը փակ պառկած էր . մայրը ներս կմտնէ , կարծելով թէ նա խորունկ քունի մէջ է ' աթոռ մը կառնու կնստի քովը , երկար ատեն միակերպ տղուն վրայ կնայի , զգուշութեամբ ձեռքին մէկը բերնին կտանի , քանի մը անգամ կհամբուրէ եւ կրսէ ցած ձայնիւ ու լալով . « Հանգիտ քուն եղիր , սիրուն զաւակս , դու չես գիտեր թէ ինչ աստիճանի մեծ է քու վրադ ունեցած սէրս . . . տաքութեանդ ատեն բերնէդ ելած խօսքերդ սիրտս կտրտեցին . ասիսնս որ ուշ իմացայ հիւանդութեանդ պատճառը . բոլոր ջանքս այն էր որ չիմացընեմ քեզի իմ չափազանց սէրս , եւ այս իմ սրխալմունքս էր որ քիչ մնաց զքեզ կեանքէդ պիտի բաժնէր . . . » : Եղուարդը քուն չէր , մօրը բոլոր ըսածները լսեց . ալ չգիմացաւ , երեսը մէկալ կողմը դարձուց որ մայրը չըտեանէ իրեն լացածը : Իսկ նա նորէն քուն կարծեց տղան , եւ խօսքերը առաջ տարաւ . « Խեղճ տղայ , կրսէր , որչափ չարչարեցի զքեզ . բայց այսուհետեւ անպատճառ պիտի

վարձատրեմ' այն նեղութեան տեղը՝ որ ին-
ծի ալ մեծ չարչարանք էր . . . Ահ որդեակ,
Աստուած ինձ ներեց, որովհետեւ դուն ա-
ռողջանալու վրայ ես. սիրուն եղուարդս,
արդեօք դուն ալ կներես ինձի: — Այն, մայ-
րիկ» կանչեց տղան, եւ մօրը գիրկը նե-
տուեցաւ. ուրախութենէն չկրցաւ աւելի
խօսք մը ըսել, մայրն ալ նոյնպէս:

Այն միջոցին տղուն հայրը միւս երկու
որդւովքը յանկարծ վրայ հասաւ: Եղուարդ
մօրմէն լսածները ծածուկ պահեց ուրիշնե-
րէն, ինքն ալ շուտով առողջացաւ, եւ սկը-
սաւ առաջուան պէս քալել, խաղալ, բան
սովորիլ:

Ժիւլն ու Շառլը խկզբան չիմացան կամ
չիմանալու զարկին իրենց մօրը եղուար-
դին աւելի երես տալը. կարծէին թէ հիւան-
դութենէն նոր առողջանալն է անոր պատ-
ճառը: Բայց նա քանի գնաց աւելի յայտ-
նի ըրաւ իւր անխոհեմ որդեսիրութիւնը,
այնչափ որ կարծես թէ շատ անգամ միւս
երկու որդիքը բոլորովին կմոռնար, եւ աչ-
քը պղտիկին վրայէն չէր գարձըներ, մին-
չեւ որ յանկարծ միաքը գար որ միւս երկու
որդիքը կտեսնեն եւ կհասկընան անոր աւե-
լի երես տուածը. — խկոյն աչքը մէկդի
կառնէր որ պարտրկէ իւր անխոհեմ խըտ-

րութիւնը : Մէկ օր՝ մէկ վայրկեան հանդրա-
տութիւն չունէր այն դժբաղդ մայրը , վասն
զի կվախնար որ մի գուցէ մէկ խօսքով կամ
չարժմունքով մը խռովութիւն ձգէ իւր ըն-
տանեաց մէջ :

Քանի որ Պարոն Մօնքառը ողջ էր՝ տանը
մէջ մեծ հանդարտութեամբ եւ սիրով կվա-
րուէին ամէնքը մէկմէկու հետ . իւր արժուն
աչքերովը խկոյն կտեսնէր ամուսնոյն այն
պակասութիւնը , եւ առանձին խրատ կու-
տար որ զգուշանայ եղուարդին աւելի երես
տալէն , եւ պէտք է անպատճառ երեք զաւակդ
ալ հաւասար սիրես՝ կըսէր : Բայց այն պա-
տուական մարդը երկար ճամբորդութիւն-
ներով եւ աշխատանքով չարչարուած լինե-
լով՝ շատ չապրեցաւ , քիչ ատենէն մեռաւ ,
եւ նորա մահը մեծ տրամութիւն պատճառեց
թէ ընտանեացը եւ թէ ամէն ճանչւոր-
ներուն որ շատ կպատուէին զինքը :

Մօնքառ տիկինը ամուսնոյն մեռնելէն վեր-
ջը սկսաւ բոլորովին յայտնի ընել որ փոքր
որդւոյն ուրիշներէն աւելի երես կուտայ .
չուա մը երկու մեծ որդիքը ուսումնարան
գրաւ , իսկ երրորդը քովը պահեց՝ ըսելով
թէ նա գեռ պղտիկ է . թէպէտ եւ տասուեր-
կու տարին անցած էր : Ամէն մարդ կըր-
նայ գիւրաւ հասկընալ թէ ինչ աստիճանի

երես կուտար այնուհետեւ այն փափուկ ու
ինքնագլուխ մեծցած տղուն . ոչ արգիլող
մը կար , եւ ոչ վրան նախանձող . ուստի չէր
գիտեր թէ ինչ ընէ որ տղան օրէ օր աւելի
շփանայ ու երես առնու : Եղուարդը հաղիւ
թէ քիչ մը գլուխը կկախէր՝ դասերը սովրե-
լու , մայրը խկոյն կեւնէր կըսէր թէ « Բաւա-
կան կարգացիր , որդի . եւ քալելու երթամք ,
այցելու թեան երթամք , թէատրոն եր-
թամք . . . » միտքն ալ դրած էր թէ այսպիսի
բաներով տղուն խելքը կսրուի ու սիրտը
կըկրթուի : Տղայն ալ այս վնասակար սովո-
րութիւններուն վարժելէն ետեւ՝ սկսաւ ա-
ւելորդ ծախքերու տալ ինքզինքը . հագուստ-
ները թանկնոց , անոնք ալ անուանի գեր-
ձակներու կարածը՝ ամենաբարակ չուխայէ .
բաճկոնը աղնիւ քաշմիր , վզնոցը բեհեզի
նման կերպաս , կօշիկները փայլուն , վրան
գլուխը մէկ թելէ . մինչդեռ եղբայրներուն
հագածն էր հաստ կապոյտ չուխայ , ուրիշ
հագուստներն ալ անոր համեմատ , սեւ վզնոց ,
եւ հասարակ կօշիկներ :

Քանի որ այն երկուքը ուսման հետ էին՝
ամենեւին հոգերը չէր իրենց փոքր եղբօրը
իրենցմէ ունեցած տարբերութիւնը . վասն
զի քիչ անգամ տուն կուգային , եւ իրենց
բոլոր ուրախութիւնը այն էր որ սիրելի

մայրերնին կտեսնեն, ուրիշ բան մտքերէն
չէր անցներ. խելքերը մտքերը լաւ ուսում
առնելու, առաջին աշակերտաց կարգը անց-
նելու եւ մօրերուն մխիթարութիւն լինելու
հետ էր:

Սակայն Մոնքառ տիկինը հանգստութիւն
չունէր իւր տղոցը խնամածուն ձեռքէն, որ
որքոց խնամակալութեան պաշտօնին մէջ
անուանի էր. այս խոհեմ ու բարեսէր մար-
դը անդադար խորհուրդ կուտար իրեն որ
երրորդ զաւակն ալ միւսներուն պէս ուսու-
մնարան դնէ. բայց անխոհեմ մայրը շատ
հնարքներ՝ շատ վարպետութիւններ բանե-
ցուց որ նորա խօսքը չընէ. վերջապէս միտ-
քը յայտնապէս ալ զուրցեց՝ թէ « Եղուարդս
քնական ատելութիւն մը ունի ամէն տեսակ
ուսմունքի դէմ, եւ միայն գեղարուեստից
վրայ սէր ունի, այսինքն նկարչութեան ու
երաժշտութեան. » ուստի տղան քովէն չը-
հեռացընելու համար՝ գաղղիարենի վար-
ժապետ մը բռնեց տունը, եւ իբրեւ աշա-
կերտ՝ անուանի պատկերահանի մը քով կըրը-
կէր գաս առնելու, միտքն ալ դրեր էր թէ
նա մեծ յարմարութիւն ունի այն արհեստին:

Եղուարդ այս կերպով մինչեւ տասնըվեց
տարեկան եղաւ, եւ ամենեւին բան մը չէր
դիտեր. հազիւ թէ մէկ գլուխ մը կարող

էր քաշել՝ դիմացի օրինակին նայելով: Իրեն տեսքին՝ գեղեցկութեանը վրայ զմայլած, մօրը հետ անգաղար թէատրոններ, պարահանդէսներ, նուագերգարաններ կերթար, եւ այս բաներու համար եղբայրներէն երկու իրեք անգամ աւելի ծախքեր կրնէր. այնչափ ըրաւ որ ամէն տեղ թեթեւսօլիկի անուն հանեց, եւ ամէնքը վրան կխրնտային. միայն մայրը վրան կնայէր ու չէր հաւատար, եւ միտքը դրած էր թէ օր մը նա իւր ընտանեացը մեծ պատիւ եւ օգնութիւն պիտի ընէ:

Ժիւլն ու Շառլը իրենց ուսումը քիչ ատենէն աւարտեցին. ուսումնարանին կրթութեամբը կտրիճ ընութիւն ու անոյշ համարձակութիւն մը առեր էին, եւ վարժեր էին միշտ ջանալու որ ուրիշներէն առաջ անցնին. լաւ հասկըցեր էին թէ երիտասարդի մը ազէկութիւնը ինչ բանի վրայ է: Հանգրստեան օրերը տուն եկան՝ քիչ մը ժամանակ անցընելու, եւ իրենց մօրն ու խնամածուին հետ կուղէին խօսիլ թէ ինչ պաշտօն եւ ինչ վիճակ պիտի ընտրեն: Մտքերն այն էր որ օգտակար մարդիկ լինին, եւ իրենց առած ուսումը պարապի չերթայ: Շառլը կուղէր Փարիզու մէջ փաստաբանի պաշտօն գտնել, իսկ Ժիւլը՝ տէրութեան

խորհրդարանին մէջ հօրը տեղը բռնել. ուս-
տի որոշեցին որ երկու քն ալ իրաւագիտու-
թիւն սովորին: Բայց Մոնքառ տիկինը հա-
մալսարանէն շատ հեռու կրնակէր. որոշեց
որ նորէն դպրոց մը գնէ զիրենք՝ իրաւա-
գիտութեան դպրոցին մօտ: Նոքա եօթը տա-
րի ուսումնարանը կենալէն յետոյ՝ մաքերը
գրած էին որ պիտի կարենան եղուարդին
պէս հանգիստ կեանք անցընել եւ իրենց
հօրը տունը հանգարտ կենալ. անոր համար
առաջին անգամ ծածուկ նախանձ մը իմա-
ցան իրենց սրտին մէջ: այնպէս որ եղուար-
դըն ալ իւր կողմանէ կճաղրէր մեծ եղբար-
ցը քալուածքը ու քանի մը կոշտ կերպերը՝
որ նոր դպրոցէ ելած շատ սղայոց սովորական
պակասութիւններն են. բայց որովհետեւ
նա մեծ եղբարցը ոչ սրամտութիւնը եւ ոչ
ուսումն ունէր, միշտ նոցա խօսքին տակը
կմնար. անով իրեն անձնասիրութիւնը ա-
ւելի կվիրաւորուէր: Մէկմէկու կճու եւ ծա-
նրը խօսքի բսել սկսան, ու մինչեւ սպառ-
նալիքներ ըրին իրարու, որ յայտնի նշան
էր՝ նոցա մէջ ատենով տիրելու հակառա-
կութեանը:

Մոնքառ տիկինը Շառլին ու Ժիւլին յան-
դիմանութիւն տալէն կվախնար, որ մի գու-
ցէ անով իւր սիրական եղուարդին գէմ

միւսներուն թշնամութիւնը աւելցընէ . ուստի խելքը միտքը այս եղաւ որ այն որդիքը ժամ մը առաջ քովէն հեռացընէ : Ուսմունքը սկսելուն պէս՝ մայրը զանոնք գպրոց դրաւ , եւ այն պատուական երիտասարդները իրաւագիտութեան մէջ ալ ինչպէս որ պէտք էր առաջ գնացին , եւ ամենուն սիրելի եղան իրենց բարի վարքովն ու աշխատանքովը :

Վերջի երեք տարին ամէն կիրակի իրենց տունը կուգային . անով անդգալի կերպով մը աւելի շէնք շնորհք եկաւ նոցա վրայ , մարդու հետ վարուելու կերպերը լաւ սովորեցան . ոչ թէ եղուարդին նման թեթեւ սօլիկ ու զգուելի կերպեր , հապա ինչպէս որ կվայլէ իրենց ընտանեացը պատիւ եւ հայրենեաց յոյս եղող երիտասարդաց : Դիւրաւ կտեսնէին իրենց փոքր եղբօրը վայելած արտօնութիւնները , թէպէտեւ նա կշանար որ դրսէն չիմացընէ . ըրած ծախքերէն յայտնի էր որ ինքը միայն միւս եղբարցը հաւասար առած ամսականովը չէր ապրեր . վասն զի մասնաւոր վարժապետներ բռնած էր պատկերահանութեան , երաժշտութեան եւ զինավարժութեան դասեր առնելու . իսկ միւս երկու եղբայրները դեռ նոր սկսած էին զինավարժութիւն սովորիլ :

Սեղանին ճակատը մօրը գիմացը միշտ
եղուարդը կնատէր՝ իբր թէ գլխաւոր տա-
նուտէրը նա էր. իսկ եղբայրները կարծեա
թէ գրսէն հրաւիրուած մէկմէկ հիւրեր է-
ին: Եղուարդը թէպէտ առնը կառք չէր
պահեր, բայց շատ անգամ գրսէն կառք
կրօնէր, եւ քանի մը անգամ մէկալ եղբար-
ցը քովերէն անցած ժամանակը՝ ցեխը վը-
րանին ցատքեցուցած էր, մինչդեռ նոքա
հարկադրուած էին միշտ ոտքով քալելու:
Մէկ խօսքով, այս ամէն բաները երկու մե-
ծին աչքերուն սաստիկ կզարնուէին, ուստի
իրենց խնամածուին ալ գանգատ ըրին. եւ
նա հարկաւոր ճանչցաւ մօրը իմացընել այն
տագոհութիւնները: Բայց նա փոխանակ ա-
նոր ճար մը գտնելու՝ այն իրաւացի գան-
գատները նախանձի տեղ գրաւ, եւ իրեն
բռնած ճամբէն ամենեւին ետ չկեցաւ. այն
ալ բաւական չէր, ելաւ որդւոցը երեսին
ալ զարկաւ նոցա նախանձը՝ կծու խօսքերով.
Եւ անոր այս անխոհեմութեամբը աւելցաւ
եղբարց մէջ ատելութիւնը:

Այն օրէն մեծերն իրենց բան ու գործ
ըրին Եղուարդը ծաղրել, ու զանազան ա-
նուններ դնել անոր, երբեմն պարօնիկ, եր-
բեմն կոմսիկ, երբեմն խումածիկ ըսելով.
մայրերնին իրենցմէ պաղածի պէս էր, որ-

դիքն ալ հետը սլաղ կվարուէին, եւ կամաց
կամաց տունէն ալ հեռացան: Եզուարդին
ուզածն ալ այն էր. ինքզինքը բոլորովին խել-
քէ մտքէ դուրս կերպով զուարճութեանց
տուաւ. չար ընկերներ ժողվեց գլուխը, եւ
սկսաւ ասդիս անդին պարտքեր ընել. պէտք
եղաւ որ մայրը այն պարտքերը վճարէ:

Ատենն եկաւ, ժիւլն ու Շառլը մեծ յա-
ջողութեամբ իրենց ուսմունքը լմընցուցին,
ու իրենց ուզած պաշտօններուն հասան: —
Երբոր երկուքն ալ քսանըմէկ տարեկան ե-
ղան, ըստ օրինաց՝ խնամածուին ձեռքին
տակէն ելան:

Նոքա գիտէին որ իրենց մօրը վայելած
գրեթէ բոլոր հարստութիւնը իրենց կալատ-
կանի՝ իբրեւ հայրենի ժառանգութիւն, եւ
մայրը անհաւասար կերպով կբաժնէ 20,000
ֆրանքի եկամուտը իւր որդւոցը մէջ. բայց
ամենեւին հաշիւ պահանջել չկամեցան իր-
մէ՝ մինչեւ որ իրենց փոքր եղբայրն ալ քսա-
նըմէկ տարեկան չեղաւ. գոհ եղան նորա
իրենց համար կապած 1,500 ֆրանքովը. ի-
րենց պաշտօնէն ալ բաւական բան վաստը-
կելով՝ պարտք կհամարէին իրենց որդիա-
կան սէրն ու սլատիւը մօրը ցուցընել:

Մտնքաւ տիկինը որդւոցը այնպիսի առա-
քինական վարմունքը տեսնելով՝ սիրտը շար-

Ժեցաւ, եւ սկսաւ նորէն անոնց հետ սիրով
վարուիլ. մեծ ջանքը այն էր որ եղուարդին
մօտեցնէ զանոնք, եւ նոցա մէջ առաջուան
երջանիկ սէրն ու միաբանութիւնը նորո-
գուի, որ մօր մը համար անգին գանձ է.
բայց նորա ըրած անխոհեմ որդեսիրութիւնն
ու խտրութիւնը բոլորովին հեռացուցեր էր
նոցա մէջէն եղբայրական սէրն ու միաբա-
նութիւնը :

Ժիւլն ու Շառլը միայն քաղաքավարու-
թեան համար դադրեցան եղուարդը ծաղը
ընելէն եւ անոր կծու խօսքեր ըսելէն. ը-
րած շռայլութիւնները չտեսնելու կղար-
նէին, եւ նորա իրենց ժառանգութեան ի-
րաւունքին տուած վնասները բանի տեղ
չէին դնէր. բայց անոյշ եղբայրսիրութեան
կապը միայն երկու մեծին մէջն էր. որչափ
որ մէկմէկու վրայ սէր եւ հաւատարմու-
թիւն ունէին, այնչափ եղուարդէն պաղ ու
հեռու կ'քալէին : Մոնքառ տիկինը շատ ան-
գամ այս բանիս համար ախու՛վախ կընէր,
բայց ներսէն դաղամնի ձայն մը կըսէր իրեն
միշտ թէ ասոր պատճառը ինքն է, ուստի
եւ պէտք չէ որ տրտնջայ :

Եղուարդին ու եղբարցը մէջ այս երե-
ւելի տարբերութիւնս ալ կար, որ նոցա
պատիւը օր ըստ օրէ կաւելնար, իսկ այն

Երես տրուած Եղուարդը ամենեւին յարգ ու
մեծարանք չունէր ուրիշներուն առջեւը :
Պատկերահանութենէն ձանձրացած՝ երա-
ժըշտութեան ետեւէ եղաւ, եւ այս կերպով
մէկ ուսմունքը կձրգէր՝ միւսին կվազէր՝
առանց ընտրութեան եւ առանց հաստատու-
թեան. վերջապէս այն ինքնահաւան դա-
տարկապորտ մարդոցմէն եղաւ որ առանց
գործի կմնան, եւ ձանձրութենէն ազատե-
լու համար՝ առջեւները ինչ զուարճու-
թիւն որ հանդիպի անոր կուտան իրենք
զիրենք, առանց մտածելու թէ անով ինչ ան-
հանգստութեանց եւ ինչ հիւանդութեանց
ու անպատուութեանց մէջ կընկնին :

Եղուարդ քսան տարեկան եղած ժամա-
նակը տղայական խաղերով ատեն կանցընէր,
բաւական վարպետ ձի կհեծնէր, մէկ քանի
տեսարաններ կօրինակէր, եւ քնարով նորե-
լուկ երգեր կնուագէր. իսկ եղբայրներուն
հետ միայն երբեմն մօրը տունը կտեսնուէր.
Եւ մայրը թէպէտ աղէկ կձանչնար մեծ որ-
դւոցը գովելի յասկութիւնները, բայց դար-
ձեալ իւր կոյր խտրութենէն ետ չէր կե-
նար, եւ քաշուած կեանքին մի միայն մխի-
թարանքը իրեն Եղուարդն էր, նա ալ մօ-
րը ամէն կամքը սիրով կկատարէր :

Եղուարդ որ անգագար կարօտ էր մօրը

քսակին, զարմանալի ճարտարութիւն մը
ունէր այն քսակէն ստակ խլելու. ոչ սիրա-
լիր ուշադրութիւն կմընար որ չընէր, ոչ
վարպետ շողոքորթութիւններ, ոչ կեղծաւո-
րութիւններ, որպէս զի մօրը սիրտը շահի.
նա ալ այնպէս կխաբուէր որ ինքզինքը ա-
մէն բանէ կզրրկէր, միայն թէ իւր շփա-
ցած որդւոյն խենթ ու խելառ ծախքերուն
ստակ բաւեցընէ: Այս բանիս վրայ ժիւլն ու
ճառլը ոչ երբէք գանգատ մը ըրին, այլ
թող կուտային որ նա իրենց փողին շահը ու-
ղածին պէս վատնէ. վասն զի լաւ գիտէին
թէ իրենց սեպհական ստացուածքին դրա-
մագլխոյն ամենեւին չկրնար ձեռք դպցը-
նել: Առաջ՝ որ մայրերնին իրենց ամէն մէ-
կուն 1,500 ֆրանք կուտար՝ իբրեւ ռոճիկ,
իրենք այն փողն ալ առնելէն ետ կեցան,
որովհետեւ այն օգնութեան կարօտ չլինե-
լու չափ արդէն վաստակ ունէին...

Այս իրենց հաւատարմութիւնն ու վե-
հանձնութիւնը ուրիշ մէկ աւելի սրտա-
շարժ եւ ազնիւ կերպով ալ ցուցուցին, —
եղուարդ խաղի տան մը մէջ 10,000 ֆրանք
կորսնցուց, եւ իրեք օրէն անպատճառ վճա-
րելու խօսք տուեր էր. քանի մը բարեկամ-
ներէ օգնութիւն խնդրեց, բայց օգուտ չը-
տեսաւ. տխուր անհանգստութիւնը երեսին

վրայ յայտնի կերեւնար: Մոնքառ տիկինը
ամենայն կերպով ետեւէ եղաւ պատճառն
իմանալու. շատ ստիպելէն յետոյ՝ որդին
խոստովանեցաւ իրեն սխալմունքը, յան-
ցանք մը որ շտկելու ճարն ալ չկար: Այն
չափազանց որդեկէր մայրը տեսաւ որ որ-
դւոյն այն նեղութենէն ազատելուն ուրիշ
ճար չկայ, իրեն դոհարները՝ որ 12,000
Ֆրանքի չափ կարծէին՝ ուղեց պարտքին
տեղը տալ, եւ իրեն ակնավաճառին այս
բանս իմացուց. նա ալ զարմանալով՝ մեծ
որդւոյն պատմեց ծածուկ մօրն ըրած ան-
խելքութիւնը: Շառլը իսկոյն հասկըցաւ որ
այս գրկանքին պատճառը փոքր եղբօրը շը-
ռայլութիւնն է. ժիւլ եղբօրը հետ խոր-
հուրդ ըրաւ, եւ այն դոհարներուն գինը
վեց վեց հազար Ֆրանք երկու եղբայր տուին
ակնավաճառին, նա ալ Մոնքառ տիկնոջ ար-
ւաւ: Այն օրը նորա տօնն էր, ճաշի շատ
մարդ հրաւիրած էր. սեղանին գլուխը յան-
կարծ իւր առջեւը սկաւառակին վրայ դը-
տաւ այն սնտուկը՝ զոր շատ մեղքընալով
ծախեր էր. հետն ալ մէկ նամակ մը այս
կերպով գրուած. «Մեր հայրը քեզի շատ
ուրախութեամբ ընծայած էր զսա. մեք
աւելի եւս ուրախ եմք որ կրնամք այս սըն-
տուկը քեզի դարձնել. . . » Մոնքառ տիկի-

նը ուրախութեամբ ու զարմանքով լցուած՝
բարձր ձայնով մը՝ Ա՛հ կանչեց. քովինները
ամէնքը ուզեցին պատճառն իմանալ, նա ալ
պէտք եղաւ որ շտկէ շիտակ պատմէ երկու
որդւոցը իրեն ըրած սրտաշարժ ընծան.
միայն սաստիկ զգուշացաւ որ այն զրկան-
քին պատճառ ինչ կամ ո՞վ լինելը չիմա-
ցընէ: Շատ ատենէ իվեր այնպէս սրտանց
Շառլն ու ժիւլը դրկած չէր. որդիքն ալ
նայնպէս մեծ ուրախութիւն զգացին. իսկ
Եգուարդ միայն այն ժամանակը իմացաւ
մօրը իրեն համար ըրած մեծ աղէկութիւ-
նը, եւ շատ ամբշցաւ եղբայրներուն առ-
ջեւը: Մայրը իսկոյն գիտեց այս բանս, եւ
կարծեց որ յանցաւոր որդին սրտանց զրդ-
ջումի եկեր է ըրածներուն վրայ, եւ այնու-
հետեւ պիտի ջանայ մեծ եղբարցը օրինա-
կովը զմայրն երջանիկ ընելու:

Մէկ ժամանակ մը Եգուարդ իրաւցընէ
իւր չար սովորութիւններէն ետ կեցած ե-
րեւցաւ, ձի պահելը թողուց, գիշերները
կանուխիկ տուն կգառնար, առաջուան պէս
հագուելու կապուելու ետեւէ չէր, նախա-
ճաշիկը գրեթէ ամէն օր մօրը հետ կընէր.
մէկ խօսքով, երկու ամսուան մէջ միայն
մէկ անգամ ծախք ըրաւ մօրը քսակէն, այն
ալ 500 ֆրանք, որ հագուստի համար ունե-

ցած պարտքը վճարէ . . . «Այս ինչ ուրա-
խալի փոփոխութիւն է, կըսէր մայրը ինքն
իրեն. սրչափ աղէկ ըրի որ այս վառվառուն
ու թեթեւ տղուն բնութեանը հակառակ
կերպով չվարուեցայ, իրեն ուղիղ ու փա-
փուկ սիրտը չցաւցուցի: Իրաւ՝ չար է բը-
նութեամբ, բայց ուրիշին չարութիւն ը-
նելը ամենեւին մտքէն ալ չէ անցած»: Վեր-
ջապէս միտքը դրեր էր թէ տղուն խելքը
գլուխը գալուն պատճառ՝ իւր եղբարցը նո-
րա հետ ազնուական կերպով վարուածն էր:

Մէկ առաւօտ մը Մոնքառ տիկինը մի-
նակ էր իւր սենեկին մէջ, եւ եղուարդ՝
ինչպէս եղեր էր որ այն օրը նախաճաշ-
կին չէր եկած, եւ ահա յանկարծ նորա
որդւոց ծերունի խնամածուն ներս մտաւ:
Այս անձը քանի քանի անգամ խրատներ
տուեր էր այն մօրը որ ետ կենայ իւր վը-
նասակար թուլութենէն. նմանապէս այն
երես առած տղուն՝ որ վարքը շտկէ, եւ ան-
միտ ծախքերը կարճեցընէ. բայց խօսքերը
մտիկ ընող չէր եղած: Խնամածու ըսած իդ
խրատները սրչափ ալ անուշութեամբ տը-
րուին՝ շատ անգամ ձանձրալի քարողի պէս
կերեւան, իբր թէ թշնամեոյ խօսքեր լի-
նէին: Մոնքառ տիկինը նորա ծանր ու հան-
դարտ կերպով մը ներս մտածը սեանելով՝

կարծեց թէ նորէն զինքը յանդիմանելու
եկեր է. պատուով ընդունեցաւ զինքը իբ-
րեւ իւր ամուսնոյն ազնիւ մէկ բարեկամը,
բայց միանգամայն այնպիսի պաղութեամբ
մը՝ որ ուրիշի դէմ միտք մը ունեցողը չը-
կըրնար պարտըկել. իսկ նա առանց պտոյտ
խօսքերու եւ առանց յառաջաբանութեան
իմացուց անոր՝ թէ պէտք է հաշիւ տաս
քու որդւոցդ՝ նոցա հօրը ստացուածքին
համար: Տիկինը շիտթեցաւ ու պատասխա-
նեց. «Ես կարծէի թէ Շառլն ու ժիւլը պի-
տի սպասեն իրենց եղբօրը տարիքին լցուե-
լուն, որպէս զի մէկ գրուածքով խնամա-
ծութեանս հաշիւները վերջանան:

— Բայց քու եղուարդ որդիդ այսօր չէ
որ քսանըմէկ տարին լմընցուց:

— Ի՞նչ կըրտես, այսօր. իրաւ, սեպտեմբերի
տասներկինդն է այսօր»: Այս ըսաւ ու դառն
ժպիտով մը վրայ բերաւ. «Կերեւի որ ամէն
մէկ բողբոջները անհամբերութեամբ կհամ-
բուին եղեր...»

— Բայց ես նոցա կողմէն չեմ եկած,
տիկին, քեզի այս բանս իմացընելու. նոքա
ամենեւին այս չեն ուզեր, ասոր հաւանու-
թիւն չեն տար. հասկա եղուարդն է զիս
ստիպելով քեզի զբրկողը:

— Ի՞նչ կըրտես:

— Հաւատան ինձի, տիկին, գիտեմ որ այս քանս շատ ծանր է քեզի. այս այնպիսի սուկալի խրատ է մայրերուն որ պիտի սարսափին այսպիսի վնասներ՝ խորութիւններ ընելէն . . . Ուրեմն հասկըցիր որ քու եղբարդդ այս օրուանս հասնելու համար՝ ժամերը ընկնէրը կհամրէր, ու շաքաթը տարի կերեւնար իրեն. չէր գիտեր որ ինչ պէս ժամ մը առաջ իւր բաժինը ձեռք ձգէ: Միտքը մեծ մեծ վաստակի ճամբաներ պատրաստած, չորս դիէն շողոքորթ ու վարպետ սրիկաներէ պաշարուած, ինքզինքը մեծ մարդու մը տեղ դրած, չըգիտեր թէ ինչպէս պիտի ուտէ հօրը ստացուածքէն իրեն ընկած բաժինը. եւ որովհետեւ քու առջեւդ չհամարձակիր ստրկին շահն ալ ուզելու, — որ դուն այնչափ անխոհեմութեամբ իրեն կերուցիր՝ նաեւ եղբարցը զրկանք ընելով, — իմացուց ինձի թէ ութը օր է որ իւր տեղը դորձակալ մը դրեր է՝ հետդ ունեցած հաշիւները տեսնելու, եւ իւր բաժնին եկամուտները իրմէ առած մուրհակներովդ լեցրնելու:

— Մուրհակներ. ինչպէս մուրհակ, կանչեց Մոնքառ տիկինը զարմացած ու բարկութենէն տակնուվրայ եղած. իմ մտքէս ալ անցած չունի երբէք որ իրմէն թղթի կտոր

մը անգամ առնում. ես խենթի պէս կու-
տայի իրեն իմ բերնէս կտրած ու պահած
ստակներս, ես իրեն համար իմ գոհարներս
ծախեցի. ես իրեն համար պատրաստ էի
արիւնս թափելու, կեանքս տալու . . . Այժմ
այնչափ սիրոյս, այնչափ քաջածնեբուս,
այնչափ տառապանքներու փոխարէն, այս-
պիսի սոսկալի ապերախտութիւն պիտի ըն-
դունիմ եղեր հա՛մ . . . » Այս ըսաւ ու կարծես
թէ լեզուն բերնին մէջ ցամքեցաւ, երե-
սին գոյնը պատ դարձաւ, սիրտը մարածի
պէս ընկաւ մեծ աթոռի մը մէջ ու ինքզինքը
կորսնցուց : Յետոյ աչքերը խոլոր մոլոր
դարձընելով չորս դին՝ այն որդին կիւրնա-
ռէր՝ որուն աղէկութիւն չէր մնացած որ
չցուցրնէ, եւ նորա գողգոջոտ ու դեղնած
շրթունքներէն այս խօսքերս միայն լսուե-
ցան . « Եդուարդ . . . Անողորմ զաւակ . . .
Ա՛յսպէս ուրեմն քեզի կաթ տուած կուրծքը
պատառ պատառ կընես . . . » Մէյմալ յան-
կարծ սաք ելաւ եւ ըսաւ սաստկութեամբ .
« Ո՛ւր է նա, պէտք է որ զինքը տեսնեմ,
պէտք է որ գայ սաքս ընկնի ու մեզայ ըսէ
իւր ամէն ըրածներուն համար, տեսնեմ
ինչպէս պիտի համարձակի աչքիս երեւնա-
լու . . . »

— Է՛հ խեղճ տիկին, նա այդ պատիժէն

վաղուց ազատեցաւ. վասն զի այս առաւելոս
ելաւ Փարիզէն ու գնաց Պորտոյ, հետը տա-
նելով այն անառակ երիտասարդներէն մէկը
որ խաղի տներուն մէջ չեն պակսիր. եւ նա
անտարակոյս տղուդ խելքը ման բերելով ու
զանազան յաջող առուտուրներ խոստանա-
լով՝ նորա ձեռքի ստակը պիտի ուտէ »:

Խնամածուն խօսքը հազիւ թէ լմընցուցեր
էր, թիւ չն ու Շառլը յանկարծ ներս կմըտ-
նեն. խեղճ մայրերնին մէկէն իմէկ կփաթ-
թուի տղոցը, եւ բերանը չբացուիր. բայց
երեսին դեղնութենէն իսկոյն կհասկընան
սրտին ցաւը: Կգրկեն իրենց մայրը, վեր-
ջապէս քիչ մը կհանդարտեցընեն ու խելքը
գլուխը կբերեն: Աչքը բանայ տեսնէ որ եր-
կուքն ալ առջեւը ծունկի վրայ եկած, մէկը
մէկ ձեռքը բռնած, միւսը մէկալը, սրտա-
շարժ կերպով կըսէին իրեն. « Մայրիկ, թէ
որ տղոցդ մէկը կորուսիր, երկուսը դեռ
քովդ են: — Զաւակներս . . . սիրելի՛ զաւակ-
ներս . . . ըսաւ իրենց մայրը՝ աչքէն ար-
ցունքը թափելով . . . գիտեմ՝ կճանչնամ
իմ ըրած անիրաւութիւնս, կհասկընամ յան-
ցանքս. ես մեղայ ձեզի . . . » Յետոյ գրկեց
համբուրեց զիրենք, ու այն ատենէն նոր
ու ճշմարիտ սէր մը կապեց իւր հարազատ
զաւակացը վրայ:

Երկրորդ օրը փախստական որդւոյն գործակալը՝ Մոնքառ տիկնոջ հետ հաշիւները տեսաւ. բոլոր ստացուածքին գումարը 480 հազար ֆրանք էր, ուստի երեք որդւոց ամէն մէկուն բաժին կրնկնէր 160,000 ֆրանք: Ժիւլն ու Շառլը տեղովը գիտէին թէ իրենց մայրը այն սարկին շահը ինչ ըրեր էր. գիտէին նոյնպէս որ այն շահերը իրենց գարձընելու ճար չունէր, որովհետեւ տարին 5000 ֆրանքէն աւելի չէր մնար իրեն. ուստի յանձն առին իրենց եղբօրը բաժինը իրենք վճարել, որով նորա ստակը մինչեւ 200 հազար ֆրանքի ելաւ:

Քիչ ատենէն ժիւլն ու Շառլը աղէկ ու հարուստ տեղերէ մէկ մէկ հարս առին, եւ նոցա բերած հարստութեամբն ու իրենց վաստրկած փողերովը կարողացան իրենց մօրը հանգիստ եւ անհոգ կեանք մը պատրաստել. բայց նա իրեն ամուսնոյն թողած տրւայրովը գոհ եղաւ, եւ կրսէր թէ բաւական է զաւակացս անչափահաս ատենին անիրաւութեամբ գործածած ստակս. այժմ պէտք է որ այն յանցանքս քաւեմ: Ուրիշ կողմանէ, որովհետեւ դրեթէ միշտ երկու որդւոցը քովը կրնակէր, եւ նոցա որդիական սիրոյն տուրքերը արժանապէս կվայելէր, ամենեւին ապրուստի հոգ չէր ըներ:

Ատեն անցնելով՝ սիրտը հանգչեցաւ, ու մոռցաւ քաշածները, եւ թէպէտ եղուարդին ապերախտութիւնը իրեն համար մոռցուելու բան չէր, բայց ժիւլն ու նաուլը իրենց մայրասէր վարմունքովը կը շանային նորա վիշտերը մոռցընել: Մէյմալ յանկարծ գիր մը առաւ Պորտոյէն, ու հասցէն կարգալուն պէս՝ ձեռքը ոտքը դող ելաւ: Եւ յիրաւի՝ այն գիրը եղուարդէն եկած էր, այն անառակ որդիէն որ չար ընկերներէ խաբուելով՝ զանազան փորձանքներու հանդիպեր էր: Ստակները կորուսած, ամէն բանէ կողոպտուած, օրուան հացին կարօտ մնացած, մօրը ոտքը ընկնելով կաղաչէր կպաղատէր որ խնայէ իրեն, եւ ոչ թէ յանցանքներուն թողութիւն տայ, — վասն զի ինքզինքը թողութեան արժանի չէր տեսներ, — հասկա միայն պատառ մը հաց . . . Այն թըղթով Մոնթառ տիկնոջ նոր փակուած վէրքը նորէն բացուեցաւ, իսկզբան չիմացուց երկու որդւոցը, եւ ժամ մը առաջ փութացաւ քիչ մը օգնութիւն յուղարկելու այն դժբաղդ երիտասարդին՝ զոր ատենով այնչափ սիրեր փայփայեր էր: Բայց իւր ըրած օգնութիւնը՝ ունեցած կարողութեանը համեմատ էր, եւ իրեն մեղք կհամարէր բան մը խնդրել մեծ որդւոցմէն այն տղուն հա-

մար որ իրենց օրինաւոր բաժնին մէկ մասը
կերած էր, եւ այն գոհարներու սնտուկն ալ
որ նոցա մայրասիրութենէն ընդունած էր՝
ձեռքը չէր. վասն զի իրեն երկու պատուա-
կան հարսերուն բաժնած էր անոր մէջի գո-
հարները: Միայն մէկ քանի զարդարանքները
մնացեր էին. պէտք եղաւ որ անոնք հանէ
զրկէ եզուարդին, որպէս զի կարենայ Պոր-
տոյին մէջ պաշտօն մը գտնել իրեն, ու ա-
նով պատուաւոր ապրուստ մը ճարել: Բանը
այս էր որ նա շտկէ շիտակ գիր մը գրել
չէր գիտեր, առուտուրի ամենեւին տեղե-
կութիւն չունէր, գասաստանական օրէնք
իրաւունք չէր սովորած, եւ ամենեւին ու-
սում չէր առած: Պատկերահանութիւնը
վաղուց ձեռքէ ձգած էր. քիչ մը երածը շ-
տութիւն գիտէր, այն եւս խիստ անկատար
լինելով՝ օգուտ մը չէր կրնար բերել իրեն:
Ո՛հ, ինչեր քաշեց, եւ ինչեր քաշել տուաւ
նա այն խեղճ մօրը. քաշածներուն ալ ամե-
նէն աւելի անտանելին այն էր որ հարկա-
գրեցաւ ժիւլին ու Նաուլին գթութեանը ա-
պաւինելու:

Նոքա իրենց յանցաւոր եղբօրը չափաւոր
ապրուստ մը որոշեցին, այնպէս որ գէթ
իրենց ազգատոհմին անունը անպատիւ չընէ,
բայց այս պայմանով որ ոչ երբէք իրենց

աչքին երեւնայ, եւ իրենց մօրը խոնարհ
ու խաղաղաւէտ բնակարանը ոտք կոխելով
չպղծէ զայն : Այս պայմանները թէպէտ եւ
շատ ծանր էին, բայց անհրաժեշտ հետե-
ւանք եւ պտուղ էին այն երկպառակութեան
որ Մոնքառ տիկինը իւր որդւոցը մէջ ձգեր
էր. ուստի պէտք եղաւ որ եղուարդն ալ
յանձն առնու :


Օրական ապրուստին միայն մնացած, այն
ալ եղբայրներէն ընդունելու կարօտ, երկար
ժամանակ իւր ընտանիքէն աքսորուած ապ-
րեցաւ. եւ քանի որ կմտածէր երիտասար-
դութեանը ատեն ըրած զեղխութիւնները,
իւր նեղութիւնը օրէ օր աւելի ծանր կու-
գար իրեն :

Վերջապէս, — մօր մը գթասիրութիւնը
չափ սահման չունի, — հրաման առաւ Փա-
րիզ դառնալու : Ժիւլ Մոնքառը զօրաւոր միջ-
նորդներու ձեռքով չափաւոր պաշտօն մը
գտաւ եղուարդին, որ 1500 ֆրանք կբերէր
տարին, եւ անով անցուց նա բոլոր կեանքը :
Ամէն անգամ որ իրեն վիճակը կբաղդատէր
եղբարցը հարուստ, երջանիկ ու պատուա-
ւոր վիճակին հետ, սիրտը կկրտրրտէր :

Առանց բարեկամներու, առանց ընկերա-
կան վիճակի ապրեցաւ. կարծես թէ ծառ-
մըն էր անտառի մէջ գարնան ժամանակ ա-

ուանց ճիւղերու տերեւներու կանաչութեան
մնացած . իւր մօրը հանգստութիւնը կոր-
սընել տուաւ , կեանքը դառնացուց , ծերու-
թիւնը չարչարանք դարձուց . եւ ամէն ան-
գամ որ Մոնքառ տիկինը մայրական աչուը-
ները վրան կդարձընէր , կարծես թէ այս
էր անոր ըսածը տխուր կերպով մը . « Ա՛յս
է եղեր ուրեմն իմ կոյր սիրոյս եւ մեղա-
պարտ խտրութեանս պատիժը թէ ինձի եւ
թէ քեզի » :





2369

2013

